

30.11.23 - 30.11.23

10:00

Անցանց

Գրանցումը փակ է



[Պահպանել Google օրացույցում](#)

ԵՊՀ Պալեանների անվան դահլիճ

Ս.թ. նոյեմբերի 30-ին՝ ժամը 10:00-ին, ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում

«Մանյոշու. ճապոնական դասական գրականությունը և դրա նշանակությունը համաշխարհային գրականության համար» թեմայով դասախոսություն կկարդա թարգմանիչ, բանաստեղծ Փիթեր ՄաքՄիլլանը: Դասախոսությունը կանցկացվի անգլերենով:

Փիթեր ՄաքՄիլլանը «Tsukinofune Co»-ի հիմնադիրն ու տնօրենն է, «NHK World»-ի «Կախարդական ճապոներեն» ծրագրի հաղորդավարը: Նա տարբեր ժամանակաշրջաններում աշխատել է Տոկիոյի, Կիորիկի համալսարաններում: Ճապոնիայում և ԱՄՆ-ում արժանացել է լավագույն թարգմանության մրցանակների: Նրա թարգմանություններից են՝ «Հյակունին Իշյու» դասական ճապոնական բանաստեղծությունները (2008), «Իսե Մոնոգատարի» ճապոնական «վակա» բանաստեղծությունների և պատմվածքների ժողովածուն (2016), «Հարյուր բանաստեղծներից մեկական բանաստեղծություն» ժողովածուն (2017): ՄաքՄիլլանի վերջին հրապարակումներից են «Ճամփորդություն Մացուո Բաշոյի պոեզիայի միջով» (2022), «Ճապոնական դասականներին կարդանք անգլերենով» և «Անգլերենով վայելենք Մանյոշուն» և այլն: Բացի դրանից՝ ճապոնական «Ասահի» թերթում հրապարակվում է նրա՝ «Աստղերի անտառում» վերնագրով շարքը:

Փիթեր ՄաքՄիլլանը ունի փիլիսոփայության մագիստրոսի և անգլիական գրականության դոկտորի կոչում: Նա նաև ստեղծագործում է ճապոնական ավանդական գեղանկարչության տեխնիկայով՝ «Սեյսայ» կեղծանունով:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

(+37460) 710000

info@ysu.am